Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՀԱՅ ԶԻՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Գիտական մտքի տիտան, բոցաշունչ հեղափոխական, կոմունիստական Կուսակցության և աշխարհում առաջին սոցիալիստական պետության ստեղծող Վլադիմիր Իլյիչ Լենինը իր ամբողջ կյանքը նվիրաբերեց պրոլետարիատի և բոլոր ճնշված մասսաների սոցիալական ազատագրության մեծ գործին։ Այդ մեծ գործի համար մղված պայքարում Վ. Ի. Լենինի հուսալի զինվորներն ու աշակերտները եղան տարբեր ազգերի և ժողովուրդների լավագույն ու անձնվեր զավակները՝ Ի. Վ. Բաբուշկինը, Ն. Ե. Բաումանը, Մ. Ի. Կալինինը, Վ. Զ. Կեցխովելին, Յա. Մ. Սվերդլովը, Ն. Ա. Սկրիպնիկը, Ֆ. Է. Ձերժինսկին, Պ. Ա. Ջափարիձեն, Մ. Ա. Աղիղբեկովը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Մ. Վ. Ֆրունզեն և շատ ուրիշներ։ Սրանց թվում իրենց արժանավոր տեղն ունեն նաև հայ ժողովրդի փայլուն ներկայացուցիչները՝ հայ լենինյանները։

Հայ ինտերնացիոնալիստ հեղափոխականների հոյակապ համաստեղության մեջ առանձնապես աչքի ընկան Իսահակ Լալայանցը, Բոգդան Կնունյանցը, Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը, Կամոն, Ալեքսանդր Բեկզադյանը, Վլադիսլավ Կասպարյանցը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Սարգիս Կասյանը, Վառլամ Ավանեսովը, Սարգիս Բազդատյանը, Վահան Տերյանը և ուրիշներ։

Հայ հեղափոխականներից Վ. Ի. Լենինի առաջին ընկերն ու զինակիցը Իսահակ Քրիստափորի Լալայանցն էր (1870—1933)։ Նա ծնվել է Թերեքի մարզի Ղզլար քաղաքում։ Սկզբնական կրթությունը ստանալով իր մայրենի լեզվով, Լալայանցը տեղափոխվում է Թիֆլիս, ուր մեկ տարի սովորում է ռեալական ուսումնարանում և ապա տեղափոխվում Կազանի ռեալական ուսումնարանը, որն ավարտում է 1889 թ.։ Կազանում Լալայանցը ծանոթանում է ռուս ականավոր մարքսիստ Նիկոլայ Ֆեդոսեևի հետ, մտնում նրա մարքսիստական խմբակը և ուսումնասիրում մարքսիստական գրականությունը։ Հեղափոխական գործունեության համար աքսորվելով Կազանից, Լալայանցը տեղափոխվում է Սամարա, որտեղ 1893 թ. սկզբին հանդիպում և ծանոթանում է Լենինի հետ։ Լալայանցը Լենինի հետ ունեցած իր առաջին հանդիպման մասին հետագայում գրել է. «Այդ 23-ամյա մարդու մեջ ամենազարմանալի կերպով զուգակցվում էին մի կողմից՝ պարզությունը, նրբազգացությունը, կենսասիրությունն ու կրքոտությունը, և մյուս կողմից՝ մեծալրջությունը, գիտելիքների խորությունը, տրամաբանական անողոք հետևողականությունը, դատողության և սահմանումների պարզորոշությունն ու հստակությունը»[1]։

Սամարայում Լալայանցը հին հեղափոխական Ա. Պ. Սկլյարենկոյի հետ մտնում է Լենինի կազմակերպած մարքսիստական խմբակը։ Եռանդուն հե-

---

1 «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին», գիրք առաջին, Երևան, 1957, էջ 135։

ղափոխական գործունեության համար Լալայանցը հինգ անգամ ձերբակալվում և աքսորվում է, տաս ամիս կրում ձեռքի շղթաներ, տասնմեկ տարի անցկացնում է բանտերում և աքսորներում։ 1902 թ. նա Սիբիրի աքսորավայրից փախչում է արտասահման։ Իմանալով այդ մասին, Լենինը Լոնդոնից գրում է. «Հազար ողջույններ հին բարեկամիս»[2]։ Լենինի հանձնարարությամբ Լալայանցը զեկավարում է Ժնևում համառուսաստանյան քաղաքական «Իսկրա» թերթի հրատարակությունը։

1903 թ. վերջին, կուսակցության II համագումարից հետո, որպես կայուն լենինյան Լալայանցը ակտիվ դեր է կատարում բոլշևիկյան III համագումարի նախապատրաստման գործում։ 1906 թ. նա զեկավար մասնակցություն է ունենում կուսակցության մարտական կազմակերպությունների Տամերֆորսի կոնֆերանսին։ Տարվա վերջին Լալայանցը ձերբակալվում և աքսորվում է Արևելյան Սիբիր։

Լենինը միշտ հիշում էր ու բարձր գնահատում Լալայանցին։ 1921 թ. նա գրել է. «Ես Լալայանցին ճանաչում էի 1890-ական թվականներից, իբրև մարքսիստի և հետո՝ բոլշևիկի։ Անկասկած, նվիրված հեղափոխական է...»[3]։

XIX դարի վերջից Լենինի գործին զինվորագրվում է Բոգդան Միրզաչանի Կնունյանցը (1878—1911)։ 1897 թ. Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Կնունյանցը մտնում է «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» շարքերը, ապա դալիս է Բաքու, դառնում տեղի կուսակցական կազմակերպության զեկավարներից մեկը և ընտրվում ՌՍԴԲԿ II համագումարի պատգամավոր։ 1903 թ. ամռանը Կնունյանցը արտասահմանում անձամբ ծանոթանում է Լենինի հետ։ Համագումարի աշխատանքների ընթացքում հետևողականորեն պաշտպանելով լենինյան դիծը, դառնում է առաջին բոլշևիկներից մեկը և արժանանում Լենինի բարձր գնահատականին։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Կնունյանցը Լենինի հուսալի հենարաններից էր Կովկասի և ամբողջ Ռուսաստանի կուսակցական կազմակերպություններում։

1905 թ. մարտին ցարական կառավարությունը կազմակերպում է Կնունյանցի «դատավարությունը»։ Դատարանում արտասանած իր հիանալի ճառում աննկուն հեղափոխականը մերկացնում է ցարական բռնապետության ռեժիմը և հաստատ համոզմունք հայտնում, որ Ռուսաստանում սկսված ժողովրդական հեղափոխությունը կհասցնի ցարական ինքնակալության տապալմանը և բանվոր դասակարգի հաղթանակին։ «Դուք հանձն եք առնում դատել հեղափոխականին այն ժամանակ, երբ դրսում հեղափոխություն է,— շպրտում է ցարական չինովնիկների երեսին Կնունյանցը,— դուք հանձն եք առնում պաշտպանել մի իրավակարգ, որը պատմության կողմից դատապարտված է կործանման։

Դե դատեցեք, պ. պ. դատավորներ, իսկ մեզ ձեզ հետ միասին հեղափոխությունը կդատի»[4]։ Կնունյանցի քաղաքական այս փայլուն ելույթը լույս է տեսնում լենինյան «Վպերյոդ» թերթում, առանձին հրատարակությամբ և լայնորեն տարածվում ամբողջ երկրում։

---

[2] В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 46, էջ 219։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 45, էջ 353։
[4] Բոգդան Կնունյանց, Երկերի ժողովածու, Երևան, 1979, էջ 117։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Կնունյանցը Լենինի հանձնարարականով լինում է Ռուսաստանի մի շարք վայրերում, կազմակերպում է պրոլետարիատի ուժերը զինված ապստամբության համար։ 1905 թ. աշնանը նա, որպես ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեի անդամ, խոշոր դեր է կատարում մասսաների հեղափոխական պայքարի կազմակերպման, մայրաքաղաքի բանվորական դեպուտատների Սովետի ստեղծման գործում։ Ընտրվելով Սովետի գործկոմի անդամ և նրա քարտուղար, որպես բոլշևիկների ներկայացուցիչ, Կնունյանցը պայքարում է Սովետի ամրապնդման համար։

1905 թ. դեկտեմբերի սկզբին Կնունյանցը Պետրոգրադի Սովետի մյուս գործիչների հետ միասին ձերբակալվում է և դատապարտվում ցմահ աքսորի։ Նա ուղարկվում է Տոբոլսկի նահանգի Օբդորսկ գյուղը։ 1907 թ. հունիսին Կնունյանցին հաջողվում է մեծ դժվարություններ հաղթահարելով փախչել աքսորավայրից և անցնել Պետերբուրգ ու ապա արտասահման։ 1907 թ. սեպտեմբերին Կնունյանցը մասնակցում է II Ինտերնացիոնալի Շտուտգարդի կոնգրեսին, իսկ նույն թվականի նոյեմբերին՝ ՌՍԴԲԿ IV կոնֆերանսին, որից հետո գալիս է Ռուսաստան և անլեգալ աշխատանքի անցնում Բաքվում։ Կնունյանցին հետևող ցարական օխրանկան 1910 թ. սեպտեմբերին ձերբակալում է նրան և բանտարկում Բաքվի Բաիլովյան բանտում, որտեղ և մահանում է 1911 թ. մայիսին։

Կնունյանցի հիշատակին նվիրված մահախոսականում, որը տպագրվել է Լենինի խմբագրությամբ լույս տեսնող «Ռաբոչայա գազետա» թերթում, Ստեփան Շահումյանը գրել է, որ նա «դեռ 20 տարեկան էլ չկար, երբ հարեց մեր կուսակցությանը և այդ ժամանակվանից էլ նրա ամենահավատարիմ ու ամենաազնիվ անդամներից մեկն էր։ Նա չէր ապրում, այլ վառվում էր իր գեղեցիկ կյանքի այդ տասը տարիների ընթացքում, որը նա ամբողջությամբ, առանց մնացորդի նվիրեց սոցիալիզմի և դեմոկրատիայի համար մղվող պայքարին»[5]։

Լենինի և Շահումյանի առաջին անձնական ծանոթությունը տեղի էր ունեցել 1903 թ. ժնևում։ Այնուհետև համատեղ աշխատանք, պայքար Ռուսաստանում և արտասահմանում, նամակագրություն, որի տեսական ու գործնական նշանակությունը դժվար է գերագնահատել, մասնավորապես բոլշևիկների ազգային ծրագրի մշակման գործում։

1908 թ. ռեակցիայի դաժան ժամանակաշրջանում իր բարեկամ, կուսակցության ականավոր գործիչ Միհա Յխակայային գրած նամակներում Շահումյանը (1878—1918) Անդրկովկասի բոլշևիկների անունից հպարտորեն հայտարարում էր. «Մենք հաստատ համոզված ենք Իլյիչի դիրքորոշման ճշտության մեջ», «մենք ամբողջովին Իլյիչի կողմն ենք»[6]։ Լենինի և Շահումյանի նամակագրությունը առանձնապես աշխուժացավ 1913—1914 թթ.։ Իր նամակներում Շահումյանը կարծիքներ էր փոխանակում Լենինի հետ, նյութեր էր ուղարկում նրան Կովկասում ազգային հարցի վերաբերյալ։

1915 թ. հոկտեմբերի 1-ին Վ. Ի. Լենինին և Ն. Կ. Կրուպսկայային գրած ծածկագիր նամակում ջերմորեն պաշտպանելով պատերազմի մասին Լենին-

5 Ստեփան Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Երևան, 1976, էջ 210։

6 Նույն տեղում, էջ 68, 109։

յան հայացքները, Շահումյանը հայտնում էր կուսակցության առաջնորդին Կովկասում բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին, նշում էր Լենինի նամակների, խորհուրդների, ցուցումների խոշոր նշանակությունն իրենց համար։ «Ձեր նամակները, խորհուրդները և ցուցումները,— ինձ համար միշտ ամեն բանից թանկ են եղել... Ես և մեր բոլոր ազգականները (բոլշևիկները) բարձր ենք պահում մեր ընտանեկան (բոլշևիկյան կուսակցության) դրոշակը և որ Դուք կարող եք մեր ռևոլուտացիայի համար հանգիստ լինել»[7]։

1917 թ. հունիսին Պետրոգրադում Շահումյանը կրկին հանդիպում է Լենինի հետ և ապա վերադառնում Կովկաս, սովետական իշխանության հաղթանակն այնտեղ ապահովելու համար։ 1918 թ. մայիսի 14-ին Շահումյանին ուղարկած նամակում Լենինը գրում էր. «Մենք հրճվանքի մեջ ենք Ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից»[8]։

Վ. Ի. Լենինը հիացմունքով է խոսել նաև Սիմոն Տեր-Պետրոսյանի՝ լեգենդար Կամոյի (1882—1922) մասին։ 1919 թ. Լենինը գրել է, որ գիտե Կամոյին «որպես միանգամայն բացառիկ նվիրվածության, խիզախության և հանդգնության տեր մարդու»[9]։

1906—1912 թթ. Լենինի հանձնարարությամբ Կամոն մեծ գործունեություն է ծավալում արտասահմանում։ Փարիզում մոտ երկու ամիս մնալով Լենինի մոտ, Կամոն այնտեղ անցնում է հեղափոխական հասունության մեծ դպրոց։ Ն. Կ. Կրուպսկայան պատմում է Կամոյի նկատմամբ Լենինի դրսևորած մեծագույն հոգատարության մասին։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ու իրագործման ժամանակաշրջանում Կամոն բազմիցս լինում է Լենինի մոտ, կատարում նրա կարևոր հանձնարարությունները։ 1917 թ. վերջերին Պետերբուրգից գալով Կովկաս, Կամոն Շահումյանին է հանձնում Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ. Ի. Լենինի ստորագրած մանդատը՝ Ս. Շահումյանին Կովկասի գործերի արտակարգ կոմիսար նշանակելու մասին և 500 ռուբլի ոսկով՝ Բաքվի Սովետի կարիքների համար։

1920 թ. մայիսին Կամոն գնում է Մոսկվա։ Վ. Ի. Լենինի խորհրդով նա պատրաստվում է ընդունվել զինվորական ակադեմիա, սակայն 1921 թ. գործուղվում է Իրան, ուր մնում է մինչև 1922 թ. սկիզբը։

Թիֆլիսում, Կամոյի գերեզմանի վրա դրված բազմաթիվ պսակներից մեկն ուներ հետևյալ մակագրությունը. «Անմոռանալի Կամոյին։ Լենինից և Կրուպսկայայից»։

Հայտնի է Լենինի մտերմությունը Սուրեն Սպանդարյանի («Տիմոֆեյ») հետ, որն սկսվել էր 1908—1909 թթ.։ Ս. Սպանդարյանը (1882—1916) Լենինի ղեկավարությամբ մասնակցում է բոլշևիկների VI (Պրագայի) կոնֆերանսին, որտեղ 1912 թ. հունվարին Լենինի առաջարկությամբ ընտրվում է կուսակցության Կենտկոմի անդամ։

Վ. Ի. Լենինը մեծ ցավով իմացավ Ս. Սպանդարյանի ձերբակալման մասին, որ տեղի ունեցավ 1912 թ. մայիսին Բարվում։ Ն. Կ. Կրուպսկայայի հետ

---

[7] Նույն տեղում, հատ. 3, էջ 14—15։

[8] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 359։

[9] В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 51, էջ 42։

միասին նա այցելում է Սուրեն Սպանդարյանի՝ այն ժամանակ Փարիզում գտնվող ծեր և հիվանդ հորը, նամակ է գրում Բեռլին՝ Սպանդարյանների ընտանիքին մտերիմ Ոսկի Տեր-Հովհաննիսյանին (հայ ականավոր գրող Մուրացանի կինը)՝ խնդրելով նրան նյութական օգնություն ցույց տալ. «Հուսով եմ, որ Դուք, ինչ կարող եք, կանեք երկու Սպանդարյանների համար էլ և այդ մասին մի երկու խոսքով կդրեք ինձ»[10],— գրում էր Լենինը այդ նամակում։ Բնորոշ է, որ 1913 թ. հունիսին Ն. Կ. Կրուպսկայան Բեռլինում գտնվող նշանավոր բոլշևիկ Սլավա Կասպարովին նույնպես գրում էր Սպանդարյանին նյութական օժանդակություն ցույց տալու անհրաժեշտության մասին։

1914—1916 թթ. գտնվելով Սիբիրի հեռավոր աքսորավայրում, Սպանդարյանը ջերմ նամակներ է գրում Լենինին, ողջունում նրան ու Կրուպսկայային, հայտնում իր խոր հավատը հեղափոխության հաղթանակի նկատմամբ։

Վ. Ի. Լենինի խմբագրությամբ արտասահմանում լույս տեսնող «Սոցիալ-դեմոկրատ» թերթի 1916 թ. հոկտեմբերի 19-ի համարում հատուկ մահախոսական տպվեց Ս. Սպանդարյանի հիշատակին, ուր ցույց էր տրվում նրա կուսակցական բեղմնավոր գործունեությունը Կովկասում և ամբողջ Ռուսաստանում և ընդգծվում Սպանդարյանի հավատարմությունը բոլշևիկյան կուսակցությանը, ինտերնացիոնալիզմի գիրքերին։

1921 թ. Սովետական Ռուսաստանի Ժողկոմխորհի նախագահ Լենինը Սուրենի հորից՝ Սպանդար Սպանդարյանից նամակ է ստանում, որով նա խնդրում էր նյութական օգնություն ցույց տալ իրեն և աջակցել Փարիզից հայրենիք վերադառնալու համար։ Այդ կապակցությամբ Լենինը կուսակցության Կենտկոմի քարտուղարությանը գրում է. «Ես և կուսակցության Կենտրոնի բոլոր աշխատողները Սուրեն Սպանդարյանին ճանաչում էինք 1908—1909 թվականներին։ Շատ գնահատելի ու աչքի ընկնող աշխատող էր... Սուրենի հայրը Փարիզում, 1910—1911 թվականներին մեզանից օգնություն էր ստանում Սուրենի խնդրանքով»[11]։ Լենինը հանձնարարում է կապվել Սուրենի հոր հետ և օգնել նրան դրամով։

Վլադիսլավ Կասպարովը (1887—1917) եռանդուն հեղափոխական գործունեություն էր ծավալել Կովկասում և Դոնի Ռոստովում։ Այնուհետև նա անցել էր արտասահման և դարձել Լենինի ու Կրուպսկայայի մոտ բարեկամը։ Լենինի հանձնարարությամբ Կասպարովը զբաղվում էր ազգային հարցի մշակմամբ։ 1917 թ. սկզբին Շվեյցարիայից վերադառնալով Ռուսաստան, Լենինը հրաժեշտի հուզիչ նամակ է գրում Կասպարովին, որը բուժվում էր Շվեյցարիայի Դավոս քաղաքում։ Նամակում ասված էր. «Թանկագին Կասպարով։ Ամուր, ամուր սեղմում եմ Ձեր և Կարլի ձեռքերը, ցանկանում եմ առույգություն։ Հարկավոր է համբերել։ Հուսով եմ կհանդիպենք Պետերում և այն էլ շուտով։

Մեկ անգամ ևս լավագույն ողջույններ երկուսիդ»[12]։

1917 թ. սեպտեմբերին Կասպարովը ծանր հիվանդությունից հետո վախճանվեց Շվեյցարիայում։

1921 թ. Վ. Ի. Լենինը գրում էր, որ Կասպարովին ինքը շատ լավ ճանաչում է արտասահմանից, «որտեղ նա 1905 թվականի հեղափոխությունից հե-

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 43, էջ 322։
11 Նույն տեղում, հատ. 45, էջ 159—160։
12 В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 49, էջ 432։

տո եղել է վտարանդիության մեջ, մտել էր բոլշևիկյան կազմակերպության մեջ, վայելում էր բոլոր այն բոլշևիկների արժանի հարգանքը, որոնց հետ ինձ վիճակված էր հանդիպել և որոնք դիտում էին Կասպարովի աշխատանքը»[13]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի առաջին ամիսներին Լենինը նամակագրական և անձնական սերտ կապեր ուներ ականավոր բոլշևիկ Ալեքսանդր Բեկզադյանի հետ։ Բեկզադյանը (1879—1939) Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից էր։ Խուսափելով ցարական հալածանքներից, 1906 թ. նա դնում է արտասահման, որտեղ անձամբ ծանոթանում է Լենինի հետ և կատարում նրա մի շարք պատասխանատու հանձնարարությունները։

Բեկզադյանը կրթված մարքսիստ էր։ Ցյուրիխում նա 1913 թ. պաշտպանել և հրատարակել էր իր դոկտորական դիսերտացիան՝ իրավագիտության գծով։ Լենինը դիտեր այդ մասին։ Ցյուրիխում նա որոշ ժամանակ ապրել էր Բեկզադյանի հետ մի բնակարանում։ Լենինի հանձնարարությամբ Բեկզադյանը մասնակցել է II Ինտերնացիոնալի Բազելի կոնգրեսին, գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության Վիեննայի համագումարին, մի շարք միջազգային խորհրդակցությունների, եղել է ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպությունների կոմիտեի կազմում։ Լենինը նամակներ է գրել Բեկզադյանին, որոնցում քննարկվում են բոլշևիկյան կուսակցության գործունեության կարևորագույն հարցերը։ Լենինին գրած իր նամակները Բեկզադյանը սկսում էր «Թանկագին Իլյիչ» խոսքերով և ավարտում «Ձեր Յուրի» ստորագրությամբ։

1914 թ. աշնանը Բեկզադյանը վերադառնում է Ռուսաստան։ Գալով Կովկաս, նա այստեղից շարունակում է նամակներ գրել Լենինին։ Բեկզադյանը մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց Վ. Ի. Լենինին։

1917 թ. ապրիլի 3-ին, Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո, Վ. Ի. Լենինը հարկադրական էմիգրացիայից վերադառնում է Ռուսաստան։ Պետրոգրադի Ֆինլանդական կայարանում հեղափոխության առաջնորդին դիմավորելու էին եկել կուսակցության Կենտկոմի, Պետրոգրադի կոմիտեի անդամները, գործարանների, ֆաբրիկաների, զորամասերի ներկայացուցիչները։ Վ. Ի. Լենինին դիմավորողների և միտինգների մասնակիցների թվում էին նաև հայ բոլշևիկներ Սարդիս Բաղդատյանը (Բոդդատև), Սահակ Տեր-Գաբրիելյանը, Նինա Աղաջանյանը (Աղաջանովա), Սարդիս Լուկաշինը (Սրապիոնյան), Արտաշես Կարինյանը, Երեմիա Բակունցը, Աղասի Վարդանյանը, Վարդանուշ Բահաթրյանը (Եվգենիա Բագատուրյանց), Շուշանիկ Քամալյանը, Արփենիկ Նազարբեկյանը (Նազարբեկովա) և ուրիշներ։ Նրանցից ոմանք տարիներ առաջ զինվորագրվել էին Լենինյան կուսակցությանը, հանդիպել և աշխատել էին Լենինի հետ, իսկ մյուսները Լենինին լավ գիտեին որպես բանվոր դասակարգի սիրված առաջնորդի։

Սարդիս Բաղդատյանը (1887—1949) ծնվել է Շուշի քաղաքում, երկաթուղային բանվորի ընտանիքում, բոլշևիկյան կուսակցության շարքերն է մտել նրա ստեղծման առաջին օրերից։ Լենինյան գաղափարներով զինված հեղափոխական աշխատանք է տարել Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշիում։ 1909 թ. նա ՌՍԴԲԿ Պետրոգրադի կոմիտեի անդամ

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 45, էջ 435։

էր, նրան լավ գիտեին նաև Մոսկվայի բոլշևիկները։ Հեղափոխական գործունեության համար Բաղդատյանը մի քանի անգամ ձերբակալվել և աքսորվել է, իսկ 1913 թ., անցնելով արտասահման, ծանոթացել է Լենինի հետ։ Լենինի ցուցումներով զինված՝ նա վերադառնում է Ռուսաստան և համաշխարհային պատերազմի տարիներին արդեն դառնում է Պետրոգրադի բոլշևիկների ճանաչված ղեկավարներից մեկը, պրոպագանդում է բանվորների մեջ լենինյան դիրքորոշումը պատերազմի, խաղաղության և հեղափոխության հարցերում, որի համար էլ կրկին աքսորվում է։ Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո, ազատվելով սիբիրյան աքսորավայրից, Բաղդատյանը վերադառնում է Պետրոգրադ և շուտով ընտրվում բոլշևիկների Պետրոգրադի կազմակերպության քաղաքային կոմիտեի քարտուղար։

Սահակ Տեր-Գաբրիելյանը (1886—1937) կուսակցության անդամ էր 1902 թ.։ 1917 թ. նա ընտրվում է ՌՍԴԲ(բ)Կ Բաքվի կոմիտեի կազմում։ Բաքվից նա Պետրոգրադ է գնում մասնակցելու սովետների համառուսաստանյան խորհրդակցությանը։ «Գալով Պետրոգրադ,— հիշում է Ս. Տեր-Գաբրիելյանը,— ես բախտ ունեցա դիմավորել Իլյիչին ֆինլանդական կայարանում։ Ֆինլանդական կայարանից մենք գնացինք Կշեսինսկայայի պալատը։ Այստեղ ես լսեցի Վ. Ի. Լենինի ճառերը զրահապատի վրայից և Կշեսինսկայայի պալատի պատշգամբից»[14]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի առաջին իսկ օրերից Լենինի անմիջական ղեկավարությամբ Պետրոգրադում աշխատում էին հայ ականավոր գործիչներ Վառլամ Ավանեսովը (Սուրեն Մարտիրոսյան), Վահան Տերյանը, Լևոն Կարախանյանը, Միքայել Տեր-Հարությունյանցը, Սարգիս Լուկաշինը, Պողոս Մակինցյանը և շատ ուրիշներ։

Վառլամ Ավանեսովը և Վահան Տերյանը անմիջականորեն գլխավորում էին Լենինի կառավարության կազմում ստեղծված Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից Հայկական գործերի կոմիսարիատի աշխատանքները։ Լենինը հաճախակի ընդունում էր նրանց և զրուցում Հայաստանի ազատագրության հարցերի մասին։ Լենինի հանձնարարականով Վ. Տերյանը ղեկուցագիր և դեկրետի նախագիծ է կազմում Արևմտյան Հայաստանի մասին։

1917 թ. դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ դեկրետ է ընդունում «Թուրքահայաստանի» մասին, որը սուլթանիզմի լծի տակ տառապող արևմտահայերին տալիս էր ազգային ինքնորոշման լրիվ իրավունք՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախություն։ Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանին հանձնարարվում էր «Թուրքահայաստանի» բնակչությանը ցույց տալ ամեն տեսակի օգնություն՝ դեկրետում նշված միջոցառումներն իրականացնելու գործում։

Սովետական իշխանության առաջին տարիներին Լենինի կարգադրությամբ Հայաստանում աշխատելու են ուղարկվում հեղափոխության բոցերում կոփված շատ հայ գործիչներ։ 1921 թ. ապրիլին Լենինն ընդունում է ականավոր կուսակցական ու պետական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանին (1886—1925), երկար զրույց է ունենում նրա հետ և առաջարկում աշխատանքի մեկնել Կովկաս։ «Մենք մանրամասն զրուցեցինք այն մասին, թե ինչպես պետք

14 «Воспоминания коммунистов Закавказья о В. И. Ленине», Ереван, 1970, էջ 232։

է աշխատել Կովկասում,— գրել է Մյասնիկյանը,— այդ աշխատանքի համար ինչպես պետք է հաշվի առնել ռուսական հեղափոխության փորձը, ինչ քաղաքականության պետք է հետևել Թուրքիայի նկատմամբ, և որ ամենագլխավորն է, նա խորհուրդ է տալիս զգույշ ու նրբանկատ լինել Արևելքի ժողովուրդների նկատմամբ, որոնք արդեն արթնանում են, որոնք լուսավորության կարիք ունեն, և որոնք լուսավորվելով, իրենց մոտ կկատարեն ավելի հսկայական հեղաշրջում»[15]։

Հաջորդ օրը Մյասնիկյանը ստանում է Վ. Ի. Լենինի նամակը՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» խորագրով[16]։ Այս նամակը ծրագրային նշանակություն ունեցավ Կովկասի բոլշևիկների համար։ Նամակում ջերմագին ողջունելով Կովկասի հանրապետություններին, Լենինը խնդիր էր դնում ամրապնդել սովետական իշխանությունը, երկրամասի բազմազգ ժողովուրդների միջև կոփել ինտերնացիոնալ եղբայրությունն ու դաշինքը, ստեղծել տնտեսական, կուլտուրական ու քաղաքական համագործակցություն։

Մյասնիկյանը միշտ մեծագույն հպարտությամբ է նշել, որ ինքը եղել է հանճարեղ Լենինի ժամանակակիցը և բախտ է ունեցել աշխատելու նրա հետ, նրա ղեկավարությամբ։ «Ես անչափ երջանիկ եմ և մինչև կյանքիս վերջը կհպարտանամ,— գրել է Մյասնիկյանը,— ...որ եղել եմ Լենինի ժամանակակիցը, անձամբ ծանոթ եմ եղել նրա հետ, խոսել եմ հետը, սեղմել եմ նրա ձեռքը, ման եմ եկել, շրջագայել նրա հետ, եղել եմ այդ հսկայի, մեր ժամանակի հանճարի հետևողն ու փոքր աշակերտը»[17]։

Հայ լենինյանները միշտ հավատարիմ մնացին Լենինի մեծ գործին։ Նրանք, Լ. Ի. Բրեժնևի խոսքերով ասած, ամենայն ակտիվությամբ մասնակցեցին Ռուսաստանում զարգացող պրոլետարական շարժմանը նրա առաջին իսկ քայլերից։ XIX դարի վերջից, ասել է Լ. Ի. Բրեժնևը, «երևան եկավ ինտերնացիոնալիստ-հեղափոխականների մի հոյակապ համաստեղություն, որոնք ոմբռնում էին Ռուսաստանի բոլոր ժողովուրդների աշխատավորական զանգվածների շահերի հետ Հայաստանի աշխատավոր ժողովրդի շահերի անքակտելի կապը։ Իրենց ժողովրդի բախտը կապելով Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատի պատմական առաքելության, Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ, նրանք առանց տատանվելու բռնեցին Լենինի նշած ուղին, դարձան նրա աշակերտները, բարեկամներն ու զինակիցները»[18]։

---

15 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 469—470։
16 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 405։
17 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 471։
18 Լ. Ի. Բրեժնև, Սովետական Հայաստանի 50 տարին. Երևան, 1970, էջ 7։